ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 85/2-2 «08» 05 2025

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ 2024 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 42/111-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝

հրամայում եմ.

1. ԵՊՀ ռեկտորի 2024 թ. փետրվարի 29-ի թիվ 42/111-Լ հրամանով հաստատված ի «Քննության արդյունքների բողոքարկման կարգը սահմանելու մասին» 1.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ընթացիկ քննության, ընթացիկ ստուգման, ինքնուրույն աշխատանքի, մասնակցության, ստուգարքի և եզրափակիչ քննության գնահատականների մասին ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստին պաշտոնապես ուղարկվում է տեղեկատվություն, որին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում անճշտություն (ստացած գնահատականի և «Ռեգիստրար (registrar)» համակարգում ամրագրված գնահատականի տարբերություն) հայտնաբերելու դեպքում ուսանողն այդ մասին գրավոր տեղեկացնում է ուսումնական ստորաբաժանման ղեկավարին»:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր Հ. Կ. Հովհաննիսյան